ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասիս քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 01.01.2017-30.06.2017թթ. կատարված աշխատանքների մասին

2017թ. փետրվարի 22-ին Մասիսի համայնքապետարանում տեղի է ունեցել ամփոփում համայնքապետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ, որին հրավիրվել և մասնակցել են ԶԼՄ ներկայացուցիչներ:

Ըստ սահմանված կարգի՝ ամեն շաբաթ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում օպերատիվ լսվել են նրանց հուզող հարցերը և տրվել համապատասխան հանձնարարականներ համայնքապետարանի պատասխանատու աշխատողներին: Համայնքապետի ընդունելությանը մասնակցել են 520 մարդ:

Համայնքի ղեկավարի անունով մշտապես ստացվում են նաև քաղաքացիների դիմումներ, որոնք վերաբերվում են հատկապես նրանց սոցիալական հարցերին, որոշ դեպքերում՝ քաղաքաշինական վիճելի խնդիրներին: Ընթացիկ տարվա հունվար ամսից մինչև հունիսի 30-ը համայնքապետարանի հասցեով ստացվել է 611 դիմում: Դրանք սահմանված կարգով հասցեագրվել են համապատասխան պատասխանատու աշխատողներին, դրանց տրվել է ընթացք և պատասխանվել դիմումատուներին:

Անցած 6 ամիսների ընթացքում ընդունվել է համայնքապետի 443 որոշում, 47 կարգադրություն, աշխատակազմի քարտուղարի 52 հրաման: Հունվար-հունիս ամիսներին հրավիրվել է համայնքի ավագանու 6 նիստ, ընդունվել է 57 որոշում:

Համայնքապետարանի աշխատակազմի և ստորաբաժանումների կողմից 2017թ. հունվար-հունիս ամիսներին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ֆինանսների բնագավառում

Հարկային եկամուտների 2017թ. առաջին կիսամյակում գանձումները կազմել են 49051.7 հազ. դրամ (46.8%), որից հողի հարկը կազմում է 12707.8 հազ. դրամ (50.4%), այդ թվում գյուղ նշանակության հողի հարկը 1299.9 հազ. դրամ (31.0%), ոչ գյուղ նշանակության հողի հարկը՝ 11407.9 հազ. դրամ (54.3%): Գույքահարկը՝ 36343.9 հազ. դրամ (44.7%), որից իրավաբանական անձանցից՝ 7177.1 հազ. դրամ (52.6%), ֆիզիկական անձանցից (շենք-շինություններ)՝ 5615.4 հազ. դրամ (38.8%), գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 23551.4 հազ. դրամ (44.3%):

Հողի վարձակալությունից գանձումները կազմել են 3375.7 հազ. դրամ (46.6%), որից ոչ գյուղ նշանակության հողի վարձը կազմել է 3133.4 հազ. դրամ (49.3%), իսկ գյուղ նշանակության հողի վարձը՝ 242.3 հազ. դրամ (27.1%):

Տարածքի վարձակալության վճարը կազմել է 3187.1 հազ. դրամ (63.3%):

(հազ. դրամներով)

	Անվանումը	2017թ. առաջադրանք	2017թ. փաստացի 30.06.2017թ.	Կատարման % 30.06.2017թ.
	Գույքի և հողի հարկեր	**106438.6**	**49051.7**	**46.8%**
	Գույքահարկ, այդ թվում՝	**81229.9**	**36343.9**	**44.7%**
	Ֆիզիկական անձանցից	14475.4	5615.4	38.8%
	Իրավաբանական անձանցից	13650.5	7177.1	52.6%
	Գույքահարկ փոխադրամիջոցներից	53104.0	23551.4	44.3%
	Հողի հարկ, այդ թվում՝	**25208.7**	**12707.8**	**50.4%**
	Գյուղ նշանակության հողեր	4185.4	1299.9	31.0%
	Ոչ գյուղ նշանակության հողեր	21023.3	11407.9	54.3%
	Վարձակալական վճարներ	**12281.2**	**6562.8**	**53.4%**
	Շենքի վարձակալություն	5032.2	3187.1	63.3%
	Վարձով տրվող հողեր	**7249.0**	**3375.7**	**46.6%**
	Գյուղ նշանակության հողեր	895.0	242.3	27.1%
	Ոչ Գյուղ նշանակության հողեր	6354.0	3133.4	49.3%

Սոցիալական ոլորտում

1.Թվով 189 քաղաքացիների տնայցերի արդյունքում տրվել են համապատասխան տեղեկանքներ անձնագրային բաժին և ՍԾՏԳ ներկայացնելու համար:

2.Թվով 7 անապահով ընտանիքների հուղարկավորության կարիքները հոգալու համար տրամադրվել է 275.000 դրամ

3.Թվով 173 անապահով ընտանիքներին դրամական օգնություն է տրամադրվել՝ 3.490.000 դրամ:

4.Պարբերաբար այցելվել և հսկվել է բարեգործական ճաշարանի աշխատանքը:

Առևտրի բնագավառում

Տրվել է՝

1. Ոգելից խմիչքի թույլտվություն ՝ 65 հատ
2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ՝ 76 հատ
3. Բացօթյա վաճառքի թույլտվություն՝ 90 մ² /65 օրվա համար/
4. Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ՝4 հատ
5. Արտաքին գովազդի թույլտվություն ՝ 25 հատ
6. Տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն ՝ 6 հատ
7. Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ՝ 12 հատ
8. Ժամը 24:00-ից հետո աշխատանքների թույլտվություն՝ 2 հատ

Ներքին աուդիտի բաժնի բնագավառ

09.01.17թ.-09.01.17թ.-0.06.17թ. ընթացքում Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը իրականացրել է << Մասիսի քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մասիսի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մասիսի քաղաքային համայնքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մասիսի քաղաքային համայնքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Մասիսի քաղաքային համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> ՀՈԱԿ-ի ֆինանսական աուդիտ, որոնց արդյունքները ներքին աուդիտի բաժինը ներկայացրել է հիմնադիրին, լիազոր մարմնին և աուդիտի ենթարկվող միավորին՝ վերջնական հաշվետվության տեսքով: Հիմնադիրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարությունները կատարվել են ժամանակին և արվել են առաջարկություններ:

Իրավաբանության բնագավառում

1.Մասիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը կազմել է 14 արձանագրություն, մեկ անձի նկատմամբ նշանակվել է պատրոն, մեկ անձի նկատմամբ խնամակալ, չորս դատական գործերի շրջանակներում կազմվել են ակտեր և դրանց հիման վրա եզրակացություններ, երեք հոգու նկատմամբ նշանակվել է շեֆ-դաստիարակ, մեկ երեխայի ազգանունը փոխելու համար տրվել է թույլտվություն:

2.Լիազորագրով՝որպես ներկայացուցիչ մասնակցել եմ դատական նիստերին:

3.Դատարանների պահանջներով ճշտվել են մարդկանց փաստացի գտնվելու վայրերը, հանձնվել են դատական ծանուցագրերը:

4.Կնքվել են հողամասի օտարման 15 պայմանագրեր, երկու համաձայնագիր, մեկ նվիրատվության պայմանագիր, երկու վարձակալության պայմանագրեր, մեկ անշարժ գույքի անհատույց օտարման պայմանագիր:

5.Կազմվել կամ ստուգվել են համայնքի ղեկավարի կարգադրությունների, որոշումների, համայնքի ավագանու որոշումների, աշխատակազմի քարտուղարի հրամանների նախագծեր:

6.Ժառանգություն ստանալու համար բնակիչներին տրամադրվել է 48 տեղեկանք:

7.Իրավունքի պետական գրանցում ստանալու, ինչպես նաև միասնական տեղեկանք ստանալու համար դիմել ենք ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Մասիսի սպասարկման գրասենյակ:

Գյուղատնտեսության բնագավառում

1. Համայնքի հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր են տրամադրվել:

2. Ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել գարնանացանի, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների հաշվառման վերաբերյալ տվյալները հաշվետվությունների ձևերով:

3. Կազմվել և մարզպետարան է ներկայացվել համայնքի 2017թ. հողային ֆոնդի առկայության և բաշխման ամփոփ տվյալները:

4. Պարբերաբար զբաղվել են վերադաս և այլ կազմակերպություններից, ազգաբնակչության կողմից ստացված գրությունների և դիմումների ուսումնասիրություններով ու պատասխաններով:

Քաղաքաշինության բնագավառում

Տրվել է շինարարության 26 հատ թույլտվություն, ճարտ. հատ. առաջադրանք՝ 30 հատ, քանդման թույլտվություն՝ 1 հատ, ինքնակամ կառույցների օրինականացման թույլտվություն՝ 12 հատ, հասցեավորում՝ 40 հատ, ավարտական ակտերի տրամադրում՝ 22 հատ, գույքային միավորներ բաժանման և/կամ միացման որոշումներ՝ 16 հատ, օտարվող կամ մրցութային կարգով հատկացվող հողերի փաստաթղթերի կազմում՝ 26 միավոր, դիմումների ուսումնասիրություն՝ 80 հատ:

Կոմունալ տնտեսության բնագավառում

1. Պայմանագրային բոլոր պարտավորությունները կատարվել են բավարար, ինչը հաստատվել է ամենօրյա շրջայցերի արդյունքում:

   ա) իրականացվել է վերահսկողություն 2017թ.-ի ընթացքում կատարված աշխատանքների նկատմամբ, քաղաքի գիշերային լուսավորության համակարգի մշտական սպասարկման, որակով և ժամանակին վթարների վերացման աշխատանքների ուղղությամբ:

2. Կատարվել են այցեր քաղաքացիների դիմումներին, դատարանների հարցումներին պատասխանելու և ճշտումներ կատարելու վերաբերյալ՝ ըստ դիմած հասցեների:

3. Կատարվել է ամենօրյա շրջայց քաղաքի տարածքում աղբահանության, սանմաքրման, կանաչապատ տարածքների խնամման, պահպանման և ոռոգման աշխատանքների վերահսկման նպատակով:

4. Կատարվել են սանիտարական էտման աշխատանքներ մոտ 20 հա կանաչապատ տարածքի վրա:

5. Կատարվել են կանաչապատ գոտիների մաքրման և ոռոգման աշխատանքներ:

6. Կատարվել է ծառատունկ:

Կրթության և սպորտի բնագավառում

2017թ. 1-ին կիսամյակում շարունակվել են աշխատանքները համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների կրթադաստիարակչական գործունեության կազմակերպման ուղղությամբ : 02-02-2017 թ. քաղաքապետի թիվ 08-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի համաձայն իրականացվել է վերահսկողություն մանկապարտեզ ՀՈԱԿ-ների գործունեության նկատմամբ: Կատարվել են ստուգայցեր ՀՈԱԿ-ներ, հայտնաբերված թերությունների վերաբերյալ գրվել են արձանագրություններ, կատարվել են քննարկումներ տրվել հանձնարարականներ: Տեղի են ունեցել բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքներ : Ժամանակին և օպերատիվ արձագանքվել են տեղերից եկող ահազանգերին : Մայիսին կազմակերպվել և անցկացվել են մանուկների սպորտլանդիա, հունիսի 1- ին մանուկների պաշտպանության միջազգային օրը թիվ 1-2 մանկապարտեզները Երևանում մասնակցել են մրցույթի և գրավել մրցանակային տեղեր: Կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու նպատակով ուսումնասիրություններ են իրականացվել Մարզադպրոցում, Երաժշտական և Գեղարվեստի դպրոցներում, ՄՊՍԿ –ում և Կենտրոնական Գրադարանում արդյունքները կներկայացվեն ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավար՝ **Դ. Համբարձումյան**